

Ա. ԽԳԳԻԿԻԱՅ

ՄԻ ՆՈՐ ԷՋ «ՀՅՈՒԱԽԱՓԱՅԼԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայտնի է, որ Ստ. Նազարյանը դեռևս 1844 թվականին, Կազանի համալսարանում պաշտոնավարելիս, մտադրություն է ունեցել հրատարակելու մի հայերեն ամսագիր և այդ նպատակով, նույն թվականի նոյեմբերի 2-ին, դիմել է Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձուին՝ ներկայացնելով նաև հրատարակելիք ամսագրի նախագիծ-ծրագիրը: Նազարյանի այդ մտադրությունը մնացել է անկատար. ժողովրդական լուսավորության միևնույն ժամանակ մերժել է հայերեն ամսագիր հրատարակելու համար նրա ներկայացրած դիմումը:

Հայերեն ամսագիր հրատարակելու հարցը Ստ. Նազարյանը հրապարակորեն արծարծում է 1846 թ. տպագրած իր «Обозрение истории гайканской письменности в новейшие времена» աշխատության մեջ:

Արխիվային նորահայտ փաստաթղթերը ցույց են տալիս, որ Ստ. Նազարյանը, վերոհիշյալ դիմումից տասը տարի հետո՝ 1854 թ., Մոսկվայի Հազարյան ճեմարանում պաշտոնավարելու շրջանում, նախքան «Հյուսիսսփայլը», դիմել է «Ռուսիա» անունով հայերեն ամսագիր հրատարակելու թույլտվություն ստանալու համար:

Նորահայտ այդ փաստաթղթերը և վերջիններիս հետ առնչվող այլ նյութերի համեմատական քննությունը նոր լույս են սփռում «Հյուսիսսփայլի» մտահղացման և հրատարակության հետ կապված հարցերի վրա:

Առաջին ուշագրավ եզրակացությունն այն է, որ 1854 թ. «Ռուսիա» անունով հայերեն ամսագիր հրատարակելու ծրագիրը մշակել են Ստ. Նազարյանը և Միք. Նալբանդյանը միասին:

Ի՞նչ հիմք կա այդպիսի եզրակացության համար:

1856 թ. մարտի 21-ին, երբ Ստ. Նազարյանը լուսավորության միևնույն շրջանում գտնվելով, ներկայացրել է «Հյուսիսսփայլի» նախագիծը և իր դիմումը՝ հրատարակության թույլտվություն ստանալու համար, Միք. Նալբանդյանը Ս. Գ. Սուլթանշահին ուղղած նամակում, խնդրելով աջակցել «Հյուսիսսփայլի» հրատարակության իրավունք ստանալու գործին, գրում է. «Երկուս ժամանակ է, որ ես և պարոն Նազարյանցն ցանկանում էինք դուրս տալ մի հայկական օրագիր աշխարհարար լեզվով, հասարակին հասկանալի. երկար ժամանակ այս խորհուրդը մնացել էր մեր սրտում և բոլորովին անգործ, պատճառ, որ զանազան հանգամանք արգելք էին լինում այս ազգասիրական գործին»² (ընդգծումը իմն է — Ա. Խ.):

Բնչպես հայտնի է, Նալբանդյանը Նազարյանի հետ ծանոթացել է 1853 թ. հուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին Մոսկվայում՝ Հազարյան ճեմարանում:

¹ Ս. Նազարյան, «Մի էջ Հյուսիսսփայլի պատմությունից», «Տեղեկագիր», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտություններ, 1948, № 11, էջ 73—76:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4-րդ, 1949, էջ 38:

հայոց լեզվի կրտսեր դասատուի պաշտոն ստանձնելու գործով: Այսպիսով, Ս. Գ. Սուլթանշահին վերոհիշյալ նամակը գրելու ժամանակ, նալբանդյանի ծանոթությունը նազարյանի հետ ընդամենը երկու և կես տարվա անցյալ ունեւ: Հետևաբար տարակուսանք չի կարող լինել, որ՝ «երկար ժամանակ է, որ ես և պարոն նազարյանցն ցանկանում էինք դուրս տալ մի հայկական օրագիր» ասելով, նալբանդյանը նկատի է ունեցել հիշյալ «Ռուսիա» ամսադրի հրատարակության մտադրությունը: Բայց թե ինչու՞ հրատարակության իրավունք ստանալու համար դիմել է միայն նազարյանը, կամ թե՛ ինքը նալբանդյանը չի դիմել, հեշտ հասկանալի կլինի, եթե հիշենք, որ հիշյալ դիմումից ընդամենը երկու-երեք ամիս առաջ, 1854 թ. հունվարին, ներսես կաթողիկոսի պահանջի համաձայն և Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի հրամանով, նալբանդյանը ձերբակալվել էր, և շնայած որ երկօրյա բանտարկությունից հետո ազատվել էր, բայց պաշտոնական շրջաններում արդեն ճանաչված էր իյրս քաղաքականապես անբարեհույս անձնավորություն, հետևապես նա չէր կարող իր անունով կամ մեկ ուրիշի հետ միասին ամսագիր հրատարակելու իրավունք ստանալ:

Այդ հանգամանքը, անշուշտ, դեր է խաղացել նաև հետագայում «Հյուսիսափայլի» հրատարակության թույլտվությունն ստանալու ժամանակ: Ս. Գ. Սուլթանշահին ուղղած վերոհիշյալ նամակում նալբանդյանը գրում է. «...իմ անվամբ խնդրել չէր կարելի (խոսքը «Հյուսիսափայլի» հրատարակության համար թույլտվությունն ստանալու մասին է— Ա. Ի.), պատճառ, որ ես համալսարանում լինելով և բժշկությամբ պարապելով, շունեմ իրավունք հայտնի կերպով պարապել այսպիսի բանի, թևակտև առանձին գործակից եմ օրագրին...» (Նրկերի լիակատար ժողովածու, հատ. 4-րդ, էջ 38):

Միանգամայն հասկանալի է, որ նալբանդյանը Ս. Գ. Սուլթանշահին չէր կարող հաղորդել իսկական պատճառը, այն, որ ինքը, ոստիկանական օրգաններում ճանաչված լինելով իբրև քաղաքականապես անվստահելի անձնավորություն, չէր կարող դիմել, և եթե դիմեր էլ պիտի մերժվեր:

«Ռուսիա» ամսագրի նախագծին անցնելով, հետաքրքրական է նշել, որ այն, իր հիմնական ծրագրային հարցերով նույնն է, ինչ որ 1856 թ. մարտի 18-ին կազմված և ժողովրդական լուսավորության մինիստր Ա. Նորովին ներկայացված «Հյուսիսափայլի» նախագիծը:

Որո՞նք են «Ռուսիա» ամսագրի նախագծում նախատեսված ծրագրային խնդիրները:

Նախագծի ներածական մասում խոսվում է այն բախտորոշ նշանակության մասին, որ հայ ժողովրդի համար ունեցավ Հայաստանի միացումը Ռուսաստանին, որի շնորհիվ հայերը հաղորդակից դարձան ռուսական կուլտուրային, «հարստացան ռուսական լուսավորության և գիտության պտուղներով»: Յուրաքանչյուր ռուսական մտքի գանձերը, ուսումնասիրել ռուս ժողովրդի պատմական բախտը և քաղաքացիական կյանքը, այդ բոլորի մասին հասու դարձնել հայ ժողովրդին իր ազգային լեզվով և նրան մտցնել ռուսական լուսավորության ու քաղաքակրթության ոլորտը: Նախագծում նշվում է, որ այդ շատ կարևոր նպատակի իրականացմանն է ծառայելու առաջարկվող ամսագիրը, մանավանդ որ ներկայումս (1854 թ.) Ռուսաստանում չկա հայերեն լեզվով տպագրվող և ոչ մի պարբերական հրատարակություն: Ամսագիրն իր նյութերը քաղելու է ժամանակակից ռուսական լավագույն հրատարակություններից և

թարգմանությունների միջոցով հայ ժողովրդի մեջ տարածելու է ռուս մտածողների և գրողների երկերը: Որպես հիմնական նպատակ նշվում է, որ ամսագիրը լինելու է մտավոր ու բարոյական մի օղակ՝ Ռուսաստանի և տարբեր վայրերում ցրված հայ ժողովրդի հատվածների միջև:

Նախագծում նախատեսվում է շորս բաժին: Առաջին բաժնում նշվում են հոդվածներ հատկապես Ռուսաստանի աշխարհագրության և վիճակագրության մասին, աշխարհագրական գյուտերի և հայտնագործությունների մասին, ճանապարհորդական, նկարագրություններ և այլն: Երկրորդ բաժնում նախատեսվում են պատմական հոդվածներ, ընդ որում շեշտը դրվում է Ռուսաստանի պատմության վրա, նշվում են հոդվածներ մարդկության պատմության նշանավոր իրադարձությունների մասին, հատկապես հայրենական պատմության հերոսների, ռուսական փառքի բարձրացմանը նվիրված դեմքերի կենսագրական բնութագրություններ: Երրորդ բաժնում նախատեսվում են բնագիտական հոդվածներ. մատչելի զրույցներ բնական երևույթների, աստղաբաշխության, բուսաբանության, կենդանաբանության, ֆիզիոլոգիայի և առողջապահության վերաբերյալ: Չորրորդ բաժնում տպագրվելու են վիպակներ ու պատմվածքներ, ինչպես և բարոյախոսական խորհրդածություններ:

«Այս ամսագիրը, — ասված է նախագծի վերջում, — պետք է նվիրվի Ռուսիայի փառքին և կրի «Ռուսիա» անունը»:

Սակայն, «հասարակին հասկանալի լեզվով» հայերեն ամսագիր հրատարակելու այս փորձն ևս խափանվում է: Լազարյան ճեմարանի դիրեկտոր Ի. Դ. Դելյանովին ուղղած 1854 թ. հունիսի 17-ի իր գրությամբ, նույն ճեմարանի հոգաբարձու Իվան Լազարևը հայերեն ամսագիր հրատարակելն անհրաժեշտ է համարում «հետաձգել մինչև որ լինեն ավելի բարենպաստ հանգամանքներ»¹: Այդ քաղաքավարական ձև էր միայն: Մերժման էությունն այն էր, որ հայ կղերականության և նիկոլայյան ռեժիմի մոլի պաշտպան իշխան Լազարևի ռեակցիոն հայացքներին անհամատեղելի էր «հասարակին հասկանալի լեզվով» հայերեն ամսագիր հրատարակելու գաղափարը:

Ահա «Ռուսիա» ամսագրի նախագծի ռուսերեն բնագիրն ամբողջությամբ²:

**Проект журнала на современном гайканском языке,
который предполагает издавать Степан Назарианц,
доктор восточной словесности и профессор
при Лазаревском лицее в Москве**

Сыны Армении, уже с давних времен принятые в объятия великой матери России, находят на ее почве второе для себя отечество и наравне с родными ея сынами пользуются всеми драгоценными благами, с высоты монаршего престола изливающимися на исполинскую державу. В вознаграждение тяжких потерь, в длинную цепь столетий понесенных этим народом, провидению угодно было участок армянского племени поставить

¹ Մոսկվայի մարզային արխիվ, Լազարյան ճեմարանի ֆոնդ, ցուցակ № 1, գործ 177, թերթ 8-8:

² Նույն տեղում, թերթ 3-4, «О дозволении профессору Назарианцу издавать журнал на гайканском языке, под названием „Россия“»:

под великодушное покровительство России и вместе даровать ему условия к новому лучшему существованию под сенью мудрых законов и порядок общественного. Дети Армении, усыновленные Россией, воспитанные под стеческим попечением ея, обогащенные плодами русского просвещения и науки,—дети Армении, понимая всю святость своих отношений к России, чем и каким путем могут сколько нибудь воздать долг признательности к благотворительнице? Без сомнения: глубоким чувством любви и признательности к русской стране, духовно-нравственным усвоением сокровищ русской мысли, изучением исторических судеб русского народа, пониманием его гражданского быта, наконец, передачею этих приобретений армянам на их национальном языке, и вместе введением их в круг русского просвещения и цивилизации. Осуществление столь важных целей возможно только при основании литературного органа, как духовно-нравственного проводника русской мысли и образования к местам, служащим сосредоточением армянского народонаселения. Таким литературным срганом послужит предполагаемый журнал, тем более, что в настоящее время нет в России ни одного повременного издания на армянском языке, и если какие выходили в Тифлисе под названием Кавказа, в последствии под названием Арарата, они давно уже прекратились, частью по не умению издателя поддержать свой журнал, частью по несоответственности самого журнала современным потребностям народа.

Предполагаемый мною журнал постарается по возможности исполнить свою задачу, заимствуя свои материалы из лучших повременных изданий на русском языке, будет в переводах распространять между армянами произведения русских мыслителей и литераторов, до сей поры оставшиеся для большинства армян в России как бы миром заповеданным. Политические известия займут в нем весьма ограниченное место и будут держаться в пределах газет, издаваемых в Петербурге. Словом, главное назначение предполагаемого журнала будет состоять в том, чтобы служить умственно и нравственно связующим звеном между Россиею и разсеянными по разным местам обществами армян.

Объем, устройство и условия, на которых будет издаваться журнал, следующие: ежемесячно будут выходить четыре печатных листа в большую осьмушку, на хорошей бумаге, с возможным изяществом печати. Цена годовому изданию полагается семь рублей серебром с пересылкою по почте. Содержание этого журнала будет заключаться в следующих отделах:

1. Статьи по части общего землеведения и по части географии и статистики России в особенности. Далее, описание земель, характеристика их естественной физиономии и отсюда вытекающие последствия для народной цивилизации; сведения об открытиях географических и любопытные отрывки из описания путешествий;

2. Статьи по части всеобщей истории, и истории Российского государства в особенности; в этом отделе будут сообщаемы достопримечательные события в истории человечества, биографические характеристики знаме-

нитых лиц исторических, в особенности героев отечественной истории, ревнителей русской славы и русского имени;

3. Статьи по части естествоведения. Сюда войдут беседы о законах, действующих в телесном мире, о различных явлениях физикальных, о популярной астрономии; далее, рассуждения о жизни растительной, о достопримечательных растениях в различных частях мира, об их разведении и влиянии на состояние общественное. Сюда же войдут любопытныя сведения из области популярной зоологии, физиологии и гигиены;

4. Статьи нравственно-религиозного содержания. Этот отдел будет заключать в себе беседы об отношениях человека, как существа разумного и общественного, о религии, о боге и о природе, как проповедницы чудес божественных. Сюда же будут входить рассуждения, повести и рассказы, которых цель: облагораживать образ мыслей, воспитывать сердца и образовать вкус.

Журнал этот будет посвящаться славе России и носить имя «Россия».